# ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Ծրագրի տարեկան հայտարարություն (ԾՏՀ) թիվ 1**
**Հրապարակման ամսաթիվը՝ 2024 թ. մարտի 28**

| | |
|---|---|
| **Դրամաշնորհի չափ՝** | Առավելագույնը $50,000 ԱՄՆ դոլար |
| **Գործունեության տևողություն՝** | Առավելագույնը 12 ամիս |
| **Վերջնաժամկետ՝** | Մարտի 27, 2025 թ. |
| **Ովքե՞ր կարող են դիմել՝** | Հայաստանում կամ Վրաստանում գրանցված առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպություններ (հավելյալ տեղեկությունների համար տե՛ս բաժին IV) |

## I. ՆՊԱՏԱԿԸ

Սույն ծրագրի տարեկան հայտարարության (ԾՏՀ) նպատակն է ներկայացնել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) Հարավային Կովկասի տարածաշրջանային ջրային ռեսուրսների կառավարման ծրագիրը (ՀԿՋՌԿ) և հայցել Հայաստանում կամ Վրաստանում գրանցված առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններից հայտեր՝ վերոնշյալ ծրագրի նպատակների իրականացմանը միտված գործողություններ ծավալելու համար դրամաշնորհներ ստանալու նպատակով: Սույն ծրագրի տարեկան հայտարարությունը հրապարակված է 1961թ. Միացյալ Նահանգների արտաքին աջակցությանն ակտի համաձայն:

## II. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԿՋՌԿ-ը հնգամյա ծրագիր է, որը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից՝ աջակցելու Հարավային Կովկասի երեք երկրների (Հայաստան, Ադրբեջան և Վրաստան) միջև արդյունավետ անդրսահմանային ջրային համագործակցությանը և երկխոսությանը, ինչպես նաև բարելավելու ջրային անվտանգությունը և ջրային ռեսուրսների կառավարումը:

Ծրագիրն ունի չորս փոխկապակցված նպատակներ՝

- **Նպատակ 1.** Հարավային Կովկասում շրջակա միջավայրի պահպանության և ջրային ռեսուրսների կառավարման անդրսահմանային ցանցերի ամրապնդումը տարբեր մակարդակներում:
- **Նպատակ 2.** Հարավային Կովկասի անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարման վերաբերյալ շահագրգիռ կողմերի մոտեցումների ներդաշնակեցումը:
- **Նպատակ 3.** Համայնքների խրախուսումը՝ ջրի օգտագործման նոր տեխնոլոգիաների, մոտեցումների և տնտեսական մոդելների կիրառման նպատակով, ինչը կնպաստի տարածաշրջանային ջրային ռեսուրսների բարելավված օգտագործման առավելությունների ներկայացմանը:
- **Նպատակ 4.** Տարածաշրջանային արձագանք բնապահպանության ոլորտում համագործակցության ուղղությամբ ստեղծվող նոր հնարավորություններին:

## III. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Դրամաշնորհային ծրագիրը ԱՄՆ ՄԶԳ Հարավային Կովկասի տարածաշրջանային ջրային ռեսուրսների կառավարման ծրագրի շրջանակում նպատակ ունի խրախուսել համատեղ ջանքերն ու նորարարական լուծումներն՝ ուղղված Հարավային Կովկասի տարածաշրջանում ջրի անվտանգության ամրապնդմանը, ջրային ռեսուրսների կառավարման բարելավմանը և բնապահպանական արդյունավետ համագործակցությանը: Նպատակային ֆինանսավորման միջոցով ծրագիրը կխթանի համայնքահեն նախաձեռնությունները, կաջակցի կարողությունների զարգացմանն ուղղված ջանքերին և կնպաստի ներառական մոտեցումների զարգացմանը՝ միտված ջրային անվտանգության և կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ջրին վերաբերող այլ մարտահրավերներին լուծմանը: Նախաձեռնությունների հայեցակարգերը պետք է նպաստեն ՀԿՋՌԿ ծրագրի վերը նշված նպատակներից առնվազն մեկի իրականացմանը:

Ստորև ներկայացված օրինակները նկարագրում են գործողություններ, սակայն խրախուսվում է մշակել և ներկայացնել հայեցակարգի սեփական տարբերակներ, որոնք կհամապատասխանեն ծրագրի չորս նպատակներից ցանկացածին՝

- **Կազմակերպչական կարողությունների զարգացում.** Բարելավել բնապահպանական, կլիմայի փոփոխության և ջրային ռեսուրսների կառավարման հարցերով զբաղվող գործող և կամ նոր խմբերի, հարթակների կամ ցանցերի կարողությունները՝ քննարկելու, հետազոտելու կամ լուծումներ առաջարկելու բնապահպանական, կլիմայի փոփոխության կամ ջրային անվտանգության հիմնահարցերի վերաբերյալ՝ տեղական, ազգային կամ տարածաշրջանային մակարդակով և նմանատիպ հարցերի շուրջ սահմանելու համատեղ հանձնառություններ:
- **Անդրսահմանային համագործակցության ամրապնդում.** Նպաստել Հարավային Կովկասի երեք երկրներից առնվազն երկու երկրների շահագրգիռ կողմ հանդիսացող կառույցների կամ համայնքների միջև երկխոսությանը՝ ուղղված տարածաշրջանային ջրային խնդիրների լուծմանը՝ համագործակցության ու կայունության խթանման նպատակով:
- **Ջրային ռեսուրսների կառավարման ներդաշնակեցում.** Ընդլայնել քաղաքացիական հասարակության, մասնավոր և հանրային հատվածների և ակադեմիական շրջանակների միջև հետևողական և հաճախակի շփումները՝ շոշափելի գործողությունների միջոցով անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարման հիմնական խնդիրներին լուծում տալու նպատակով:
- Մշակել և կիրառել նախաձեռնություններ, որոնք ուղղված կլինեն ջրային ռեսուրսների կառավարման իրավական, քաղաքականության, ինստիտուցիոնալ միջավայրի բարելավմանը՝ միտված ջրօգտագործողների իրազեկվածությանը և մասնակցությանը, ջրային ռեսուրսների վերաբերյալ հավաստի տվյալների/տեղեկատվության հավաքագրմանը, ջրային ռեսուրսների կառավարման վերաբերյալ որոշումների շուրջ թափանցիկ հաղորդակցությանը, առաջնահերթ ջրային ռիսկերի վրա ուշադրության կենտրոնացմանը և ընկալմանը, անցյալի փորձից քաղված դասերի յուրացմանը կամ ջրային ռեսուրսների կառավարման գործընթացներում մասնավոր հատվածի դերակատարների ներգրավվածությանը:
- **Բարելավել համայնքի ջրօգտագործումը.** Մշակել և իրականացնել համայնքահեն լուծումներ, որոնք բարելավում են ջրային ռեսուրսների կառավարումը համայնքում՝ ջրային ռեսուրսների

կոնսերվացման և պահպանման նպատակով և որոշակի նպաստ բերելով համայնքներին, մասնավորապես՝ կանանց, երիտասարդներին և փոքրամասնություններին:

- Ընդլայնել տեղական համայնքներին աջակցման առկա ջանքերը՝ առաջնահերթ ուշադրությունը ջրային ռեսուրսների կառավարման ենթակառուցվածքներին ուղղելու, ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի համար պետական և մասնավոր ֆինանսավորում մոբիլիզացնելու և անդրսահմանային ջրային ռեսուրսներին առնչվող ծրագրեր իրականացնելու նպատակով:
- Նախագծել և իրականացնել համայնքների, համայնքային ղեկավարների, աշակերտների/ ուսանողների և հասարակության իրազեկության բարձրացման միջոցառումներ՝ ջրային անվտանգության, ջրի անվտանգ օգտագործման, ջրային ռեսուրսների համատեղ կառավարման առավելությունների, «օգտագործողը/աղտոտողը վճարում է» սկզբունքների և այլնի վերաբերյալ:
- Հիմնել գործընթացներ կամ ստեղծել տեխնոլոգիաներ՝ ջրային մարմինների (քանակական և/կամ որակական) կամ խմելու ջրի/կեղտաջրերի/ոռոգման ծառայությունների որակի և հուսալիության մոնիտորինգի համար, կամ ստեղծել մեխանիզմներ ծառայություններ մատուցողների և ջրի սպառողների միջև շարունակական շփումներ համար (օրինակ՝ թեժ գծեր հետադարձ կապի ապահովման և հաճախորդների սպասարկման համար):
- Կազմակերպել գենդերային հավասարության ապահովմանն ուղղված միջոցառումներ.
  - խթանելու կանանց մասնակցությունը և ներգրավումը խմելու ջրի, կեղտաջրերի կամ ոռոգման ջրի հետ կապված հիմնահարցերի քննարկմանը (որպես ջրային համակարգի օպերատորների անձնակազմի աշխատակիցներ և/կամ որպես համայնքի ներկայացուցիչներ)
  - իրականացնել իրազեկման միջոցառումներ՝ երիտասարդ աղջիկներին և/կամ բարձրագույն կրթական հաստատությունների ուսանողուհիներին ներգրավելու ջրային համակարգերի կառավարման գործողություններում՝ վերապատրաստումների կամ ուսումնական պրակտիկայի միջոցով:
- Կազմակերպել ջրային ոլորտին առնչվող աշխատանքների վերաբերյալ համապատասխան միջին մասնագիտական և հմտությունների զարգացման դասընթացներ կանանց և երիտասարդների համար:
- Առաջարկել այլ նորարարական մոտեցումներ և համայնքի ներգրավման նախաձեռնություններ՝ բարելավելու խմելու ջրի, կեղտաջրերի կամ ոռոգման ծառայությունների մատուցումը մարդկանց լայն շրջանակի, ներառյալ՝ ջրի հոսանքով դեպի վար գտնվող համայնքների համար:
- **Անդրադառնալ ջրային անվտանգության հիմնախնդիրներին**, ինչպիսիք են՝ երաշտները, ջրհեղեղները կամ կլիմայի փոփոխության ազդեցությունները, և նպաստել առնչվող աղետների վտանգների կամ ռիսկերի բացահայտման, իրազեկման, զիտակցման և նվազեցման գործընթացներին:

<u>**Ծանոթություն.**</u> Այս օրինակները բերված են միայն պատկերացում կազմելու նպատակով: Հայտատուն կարող է մշակել այլ հայեցակարգեր և գաղափարներ, որոնք համապատասխանում են II բաժնում նշված ՀԿՋՌԿ-ի նպատակներին:

## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

**Առաջնահերթությունը կտրվի այն գործողություններին, որոնք հստակ, շոշափելի և էական օգուտներ կապահովեն բազմաէթնիկ համայնքների, սահմանամերձ համայնքների կամ մարդկանց լայն շրջանակի համար, այդ թվում՝ կանանց, երիտասարդների և այլ անբարենպաստ վիճակում գտնվող խմբերի համար:**

## ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՉԱՓԸ

Ակնկալվում է, որ դրամաշնորհի գումարը կկազմի մինչև $50,000 ԱՄՆ դոլար (արտահայված տեղական արժույթով):

**ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ և ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ** Համաֆինանսավորումը պարտադիր չէ, սակայն մեծապես խրախուսվում է և առավելություն է հանդիսանում դրամաշնորհ ստանալու առումով: Հաշվի են առնվում նաև բնեղեն ներդրումները, ինչպիսիք են՝ ապրանքները, նյութերը, սարքավորումների անվճար օգտագործումը և կամավոր աշխատանքները:

## IV. ԱՄՆ ՄԶԳ ՀԿՋՌԿ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**Ծրագրին մասնակցելու իրավունք ունեցող կազմակերպությունները**

Դրամաշնորհառուները պետք է լինեն Հայաստանում կամ Վրաստանում գրանցված կազմակերպություններ, որոնք գործում են տվյալ երկրի քաղաքացիական և հարկաբյուջետային օրենսդրության համաձայն: Դրամաշնորհառուները պետք է ունենան լավ կառավարման համակարգ՝ արտահայտված ֆինանսական, վարչական և տեխնիկական գրավոր ձևակերպված քաղաքականությամբ և գործընթացներով, որոնք ներկայացնում են ակտիվների պահպանման, խարդախությունից, վատնումից և չարաշահումից պաշտպանության վերահսկողության ձևաչափ, ինչը կնպաստի նաև ծրագրի նպատակներին հասնելուն:

Դրամաշնորհառու կարող են հանդիսանալ Հայաստանում կամ Վրաստանում գրանցված շահույթ հետապնդող կամ շահույթ չհետապնդող կազմակերպությունները, ինչպիսիք են հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ներ, հիմնադրամներ), ընկեակցությունները, մասնավոր կամ հանրային կրթական հաստատությունները (ներառյալ՝ հանրային իրավունքի իրավաբանական անձինք՝ ՀԻԻԱ), հետազոտական հիմնարկները, ոչ առևտրային իրավաբանական անձինք (ՈԱԻԱ), մասնավոր ընկերությունները և իրավաբանորեն ճանաչված այլ մարմիններ:

**Նախատեսվող գործողություններ**

ՀԿՋՌԿ ծրագիրն ակնկալում է համապատասխան որակավորում ունեցող կազմակերպությունների գործողություններ, որոնք կնպաստեն II բաժնում թվարկված չորս նպատակների իրականացմանը 2024/2025թթ. ծրագրային տարվա ընթացքում: Այս ժամանակահատվածում հայտատուները կարող են ներկայացնել հայեցակարգային ձևաչափով գաղափարներ, որոնք ուղղված կլինեն ծրագրային մեկ կամ ավելի նպատակներին:

## V. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՅՏԱԿԱՐԳԻ և ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԱՉԱՓԵՐԸ

Դրամաշնորհային գործընթացը ներառում է երկու հաջորդական փուլ՝

1. Հայեցակարգի պատրաստում և ներկայացում ՀԿՋՌԿ-ին՝ օգտագործելով տրամադրված ձևաթերթը և
2. ՀԿՋՌԿ ծրագրի կողմից դիտարկման արդյունքում հավանության արժանանալուց և ուղղորդում ստանալուց հետո, ծրագրի ամբողջական հայտի պատրաստում և ներկայացում՝ կրկին օգտագործելով պարտադիր ձևաթերթերը:

Հայեցակարգերը և հայտերը կարող են ներկայացվել անգլերեն, հայերեն և վրացերեն լեզուներով: Նախընտրելի լեզուն անգլերենն է:

## ՓՈՒԼ ԱՌԱՋԻՆ | ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Առաջին քայլով հայտատուները պետք է ներկայացնեն հակիրճ փաստաթուղթ, որը կոչվում է «Դրամաշնորհային հայեցակարգ»: Դրամաշնորհի հայեցակարգի ձևը պետք է լրացնել առցանց՝ դրամաշնորհային պորտալի միջոցով (https://dgrants.fluxx.io/): Պորտալը հասանելի կլինի 2024 թվականի մայիսից:

Առաջին անգամ հայտ ներկայացնողները պետք է գրանցվեն՝ օգտահաշիվ բացելու համար, և հաստատումից հետո նրանք կստանան էլեկտրոնային նամակ՝ պորտալ մուտք գործելու անհրաժեշտ տվյալներով: Պորտալում մանրամասն ներկայացվում են առցանց հայտի ձևը լրացնելու հրահանգները, ինչպես նաև ներառված են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և բյուջեի հավելվածները, որոնք պետք է կցվեն հայտին:

**Եթե հայտատուն չի կարողանում մուտք գործել պորտալ կամ օգտագործել այն, նա կարող է Դրամաշնորհի հայեցակարգի էլեկտրոնային տարբերակը ստանալ դիմում ներկայացնելով grants@scrwm.org** հասցեով: Հայեցակարգերը հաջորդիվ կարող են ուղարկվել վերոնշյալ էլեկտրոնային փոստի հասցեին՝ ներկայացնելով ինչպես լրացված **Հավելված 1-ը (Հայեցակարգի հայտաձև) և Հավելված 2-ը (Բյուջեի ձև),** ինչպես նաև **հանրային ռեգիստրից ստացված գրանցման փաստաթղթերը: Խնդրում ենք նամակի վերնագրի տողում մուտքագրել «APS No. 1»:**

Դրամաշնորհների կառավարիչը հայտատուին կտեղեկացնի ՀԿՋՌԿ ծրագրի կողմից դիտարկման արդյունքների մասին, և հայտի գործընթացը այս կետում կամ կավարտվի (հավանության չարժանացած հայեցակարգի դեպքում) կամ ուղղորդում կտրվի հայեցակարգը զարգացնելու՝ դարձնելով ամբողջական դրամաշնորհային հայտ (հավանության արժանացած հայեցակարգի դեպքում):

## ՓՈՒԼ ԵՐԿՐՈՐԴ | ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՅՏ

Երկրորդ քայլով հավանության արժանացած կազմակերպությունները պետք է ներկայացնեն լայնածավալ փաստաթուղթ, որը կոչվում է դրամաշնորհային հայտի ամբողջական փաթեթ: Ամբողջական հայտը պետք է լրացնել առցանց՝ նույն դրամաշնորհային պորտալի միջոցով (**https://usaid-xxxx.fluxx.io**): Ստացված հայեցակարգի հայտաձևը ավտոմատ կերպով վերածվում է դրամաշնորհային հայտի ձևի՝ լրացուցիչ հարցերով և հավելվածի պահանջով: Հայտատուից ակնկալվում է ամբողջական հայտի ներկայացում, որը ներառում է՝

1. Լրացված դրամաշնորհային հայտը
2. Ամբողջական բյուջեն, ներառյալ՝ ֆինանսական պլանի ամփոփագիրը
3. Կազմակերպության գրանցման վկայականը և կանոնադրությունը
4. Հայտատուների ֆինանսական և հաշվապահական համակարգերի վերաբերյալ տեղեկատվությունը

5. Պարտադիր հավաստագրեր և երաշխավորություններ
   - Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հավաստագիր
   - Լոբբիստական գործունեության վերաբերյալ հավաստագիր
   - Հայտատուներին հավասար հնարավորություններ ապահովելու վերաբերյալ հետազոտություն
   - Հակաահաբեկչական գործողությունների վերաբերյալ հավաստագիր
   - Առանցքային անհատների վերաբերյալ հավաստագրում՝ թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների վերաբերյալ
   - Գործունեության դադարեցման, կասեցման, անհամապատասխանության և կամավորությամբ չմասնակցելու մասին հավաստագիր[1]
   - ԱՄՆ-ից դուրս դրամաշնորհառուների համապատասխանության հավաստագիր
   - Հակակոռուպցիոն հավաստագիր

***Դիմորդները պետք է ներկայացնեն բոլոր ձևերը, որպեսզի հայտը համարվի ամբողջական:***

## VI. ԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

### ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ/ՀԱՅՏԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Հայեցակարգերն ընդունվում են մինչև 2025 թվականի մարտը՝ շարունակական հիմունքներով: Դիտարկման գործընթացը ներառում է երեք քայլ՝

1. Իրավասություն/ մրցույթին մասնակցելու իրավունք
2. Հայեցակարգի դիտարկում/հավանություն
3. Ամբողջական հայտերի դիտարկում/գնահատում

Դրամաշնորհների ընտրող հանձնաժողովը պարբերաբար հանդիպումների միջոցով կքննարկի ներկայացված հայեցակարգերը:

### ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

Հայեցակարգերի ստուգման առաջին քայլով որոշվում է՝ արդյոք հայտատուն և առաջարկվող գործողությունները համապատասխանում են ստորև ներկայացված պահանջներին.

- **Փաստաթղթեր**՝ թերի հայեցակարգերը կամ այլ ձևանմուշով ներկայացված փաստաթղթերը չեն դիտարկվում: Նման հայտեր ներկայացրած մասնակիցները կտեղեկացվեն և կարող են կրկին դիմել՝ ներկայացնելով պատշաճ ձևանմուշները:
- **Իրավական կարգավիճակ**՝ հայտատուն պետք է լինի իրավաբանորեն գրանցված մարմին, օրինակ՝ հասարակական կազմակերպություն կամ շահույթ հետապնդող կազմակերպություն:

### ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Իրավասության պահանջներին համապատասխանող հայեցակարգերը ներկայացվում են դրամաշնորհների ընտրող հանձնաժողովին (ԴԸՀ)՝ հետագա գնահատման և հնարավոր ընտրության համար:

[1] Ֆինանսավորման հաստատումից հետո դրամաշնորհ ստացողները պարտավոր են ստորագել վերոնշյալ հավաստագրերը և ապահովել դրանց պահանջների կատարումը, որպես դրամաշնորհային համաձայնագրի մաս:

Հայեցակարգերի դիտարկման հիմնական չափանիշներն են՝

1. Արդյո՞ք առաջարկվող գործողությունը համապատասխանում է ԾՏՀ նպատակներին, ինչպես սահմանված է II բաժնում, և արդյո՞ք այն ապահովում է ՀԿՋՌԿ -ի ակնկալվող արդյունքները:
2. Արդյո՞ք դիմող կազմակերպությունն ունի համապատասխան կարողություններ և փորձ առաջարկվող գործողություններն իրականացնելու համար:
3. Արդյո՞ք առաջարկվող գործողություններն օգուտ են ապահովում բազմաէթնիկ համայնքների կամ սահմանամերձ համայնքների համար կամ մարդկանց լայն շրջանակի, այդ թվում՝ կանանց, երիտասարդների և այլ անբարենպաստ վիճակում գտնվող խմբերի համար:

Հայտատուն տեղեկացվում է հայեցակարգի դիտարկման արդյունքների վերաբերյալ: Դրական արդյունքի դեպքում դրամաշնորհների կառավարիչը առաջարկում է ներկայացնել ամբողջական հայտը:

## ՀԱՅՏԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Պահանջվող ձևանմուշներին համապատասխանող հայտերը և փաստաթղթերի ամբողջական փաթեթը ներկայացվում են Դրամաշնորհների գնահատման հանձնաժողովին (ԴԳՀ)՝ հետագա գնահատման համար: Ամբողջական հայտերը կգնահատվեն հաստատված չափորոշիչներին համապատասխան՝ հաշվի առնելով ծրագրի առաջնահերթությունները:

Ամբողջական հայտերի գնահատման հիմնական չափորոշիչները ներառում են՝

- Տեխնիկական մոտեցումը, ժամկետները, տեղական կարողությունների զարգացումը, գենդերային հավասարությունը և սոցիալական ներգրավվածությունը
- Իրագործման կարողությունները, ներառյալ՝ կազմակերպության նախկին փորձը և անձնակազմի կարողությունները
- Նախատեսվող արդյունքները և ազդեցությունը, կրկնօրինակման կամ ընդլայնման հնարավորությունները, մշտադիտարկման ձևաչափը
- Ներկայացված ծախսերի ողջամտությունը, դրամաշնորհառուի և/կամ երրորդ կողմի ներդրումները

## VII. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԾՏՀ-ի կամ դրա բովանդակության հետ կապված ցանկացած հարցադրում հարկավոր է ուղարկել grants@scrwm.org էլեկտրոնային հասցեին:

Շահագրգիռ կողմերի համար կկազմակերպվեն նաև առցանց տեղեկատվական հանդիպումներ: Նրանք կարող են գրանցվել հետևյալ հղումով՝ https://forms.office.com/e/gQ0dyMf0fV՝ նախապես տեղեկացվելու առցանց հանդիպման օրվա և ժամի մասին: Հեռախոսազանգեր չեն ընդունվում:

Սույն ԾՏՀ-ի հրապարակումը չի հանդիսանում ՀԿՋՌԿ-ի կողմից դրամաշնորհի տրամադրման հանձնառություն, ինչպես նաև չի պարտավորեցնում ՀԿՋՌԿ -ին վճարել հայտի պատրաստման և ներկայացման համար կատարած ծախսերը: ՀԿՋՌԿ-ն իրավունք է վերապահում մերժելու ցանկացած կամ բոլոր ստացած հայտերը: Հայտի պատրաստման և ներկայացման բոլոր ծախսերն ու ռիսկերը կրում է հայտատուն:

Սույն ԾՏՀ-ի շրջանակներում դրամաշնորհների տրամադրման փաստացի քանակը կախված է

միջոցների առկայությունից և ստացած հայտերի որակից: Օտարերկրյա կամ տեղական դրամաշնորհառուները 25,000 ԱՄՆ դոլարից ավելի արժողությամբ դրամաշնորհների դեպքում պարտավոր են ստանալ SAM (հղում 2 CFR 25) հավաստագիր և կազմակերպության եզակի նույնականացման (UEI) թիվ:

Այն դեպքում, երբ հայտատուն ցանկանում է վիճարկել Դելոյթի ցանկացած որոշում ՏԾՀ գործընթացի ընթացքում, ներառյալ` դրամաշնորհի տրամադրումը, նա պետք է ներկայացնի գրավոր բողոք Դելոյթին` ներառելով իր դիրքորոշումը հաստատող բոլոր համապատասխան և իրեղեն ապացույցները: Դելոյթը կդիտարկի գրավոր բողոքարկումը և տասնհինգ (15) օրվա ընթացքում կկայացնի վերջնական որոշում կամ կտեղեկացնի լրացուցիչ ժամանակի անհրաժեշտության վերաբերյալ: Դելոյթի վերջնական որոշումը պարտադիր ուժ ունի հայտատուի համար: